**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-10/9-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **15.04.2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Օստինատո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **26.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-10/9-4** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 2,732,764 (երկու միլիոն յոթ հարյուր երեսուներկու հազար յոթ հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Օստինատո» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Գ-1 թաղամաս, 9/7 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ, Արաբկիր մ/ճ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2050622024161001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01250759 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/9-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Ընդհանուր քանակ | Մատակարարումը՝ 2020թ (ըստ համապատասխան եռամսյակների) | | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | | |
| 18. | փականներ՝ ըստ գործառույթների (Ջրի փական D15 <<ARKO>>) | հատ | 200 | 200 | | 1,070 | 214,000 |
| 32. | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D, 40) | մետր | 2000 | 1000 | 1000 | 820 | 1,640,000 |
| 49. | Երկաթյա անկյունակ (Մետաղական անկյունակ 30*30*3) | կգ | 1088 | 544 | 544 | 403 | 438,464 |
| 50. | Ցածր ճնշման խողովակներ (Մետաղական ուղղանկյուն խողովակ 25*25*2) | մետր | 700 | 350 | 350 | 629 | 440,300 |
| Ընդամենը | | | | | | | 2,732,764 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏՍ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Օստինատո» ՍՊԸ տնօրեն

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/9-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 18. | փականներ՝ ըստ գործառույթների (Ջրի փական D15 <<ARKO>>) | 42131100/517 | 214,000 | 214,000 | 214,000 | 214,000 | 214,000 | 214,000 | 214,000 | 214,000 | 214,000 | 214,000 |
| 32. | ջրատար խողովակաշարեր (Պոլիպրոպիլենային խողովակ D, 40) | 44161130/563 | 1,640,000 | 820,000 | 820,000 | 820,000 | 1,640,000 | 1,640,000 | 1,640,000 | 1,640,000 | 1,640,000 | 1,640,000 |
| 49. | Երկաթյա անկյունակ (Մետաղական անկյունակ 30*30*3) | 44531193/501 | 438,464 | 219,232 | 219,232 | 219,232 | 438,464 | 438,464 | 438,464 | 438,464 | 438,464 | 438,464 |
| 50. | Ցածր ճնշման խողովակներ (Մետաղական ուղղանկյուն խողովակ 25*25*2) | 44161170/516 | 440,300 | 220,150 | 220,150 | 220,150 | 440,300 | 440,300 | 440,300 | 440,300 | 440,300 | 440,300 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | 2,732,764 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Օստինատո» ՍՊԸ տնօրեն

Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ